ՀՏԴ 726.54 *Պատմություն*

ՍՅՈՒՆՅԱՑ ՇՈՒՇԱՆ ԻՇԽԱՆՈՒՀՈՒ ՆՎԻՐԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Գ. Շաբունց

Ոչ ինչ ընդհատ յարանց՝ մեծոգիք և վեհագունք հանդիսանան ի վէպս՝ և կանայք Սիւնեաց, պէսպէս չքնաղ և փսեմական կերպարանօք, առաւել քան յայլ աշխարհս Հայոց.....[1]

Միջնադարյան Հայաստանի եկեղեցիների կառուցման ժամանակ մեծ դեր են ունեցել Սյունյաց կանայք, որոնք ինչպես Սյունիքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս հովանավորել են եկեղեցիների կառուցումը, կատարել մեծ նվիրատվություններ: Պատմիչների աշխատություններում, ինչպես նաև վիմագիր արձանագրություններում բազմաթիվ վկայություններ կան Սյունյաց իշխանուհիների և թագուհիների գործունեության վերաբերյալ: Ստեփանոս Օրբելյանի աշխատությունից[2], ի թիվս այլ կանանց շինարարական գործունեության, հանդիպում ենք նաև Սյունյաց Շուշան իշխանուհու գործունեությանը:

Եղեգնաձորի Խաչիկ գյուղի մոտ գտնվող Խոտակերաց կամ Քարկոփ կոչված վանքը մինչև Սյունյաց Աշոտ իշխանի կառավարումը անբնակ էր ու ավերակ: Աշոտ իշխանը վերստին կառուցել էր եկեղեցին և որպես կալվածք եկեղեցուն տվել Արաստամուղ գյուղը: Երկրաշարժից վանքի բոլոր շինությունները և եկեղեցին փլվել էին, իսկ Աշոտ իշխանն արդեն մահացել էր, ուստի Տեր-Հովհաննես եպիսկոպոսը վանքի ավերման մասին տեղեկացնում է Աշոտ իշխանի տիկնոջը՝ Շուշանին, վերջինս էլ եպիսկոպոսին խնդրում է շտապ կերպով սկսել կառուցել եկեղեցին և շրջակայքը՝ առաջինից ավելի շքեղ՝ ասելով. «զի մի՛ կորիցէ, ասէ, յիշատակ տեառն իմոյ Աշոտոյ»:[3]

Հովհաննես եպիսկոպոսն անհապաղ կատարում է խնդրանքը: Նավակատիքին էլ ներկա է լինում հայոց մեծ կաթողիկոս Տեր-Հովհաննեսը (Հովհաննես Դրասխանակերտցին)[4] : Վանքը «պայծառապէս զարդարեցին» և եկեղեցու վրա Աշոտի և Շուշանի հիշատակին փորագրեցին արձանագրություն, որը Ստ. Օրբելյանի մոտ պահպանվում է հետևյալ տեսքով. «Նախ և առաջին իսկ լեալ էր վանքն Խոտակերաց. և վասն զի աւերեալ էր կրօնաւորաց ուխտս և քաւարանս որ 'ի սմա 'ի վաղնջուց հետէ իսկ, ապա տէրն իմ՝ երանելին Աշոտ աշխատութեամբ շինեալ էր զսուրբ եկեղեցիքն՝ միանգամայն իսկ նորոգապէս զարդարեալ զամենայն շինուածսն

---

[1] *Ղևոնդ Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 7:*

[2] *Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861(այսուհետ՝Օրբելյան)*

[3] *Նույն տեղում, էջ 172:*

[4] *Բոյաջյան Ռ., Հայ կանանց դերը միջնադարյան ճարտարապետական հուշարձանների կառուցման գործում, (IX-XIII դդ.), ԼՀԳ, Երևան, 1978, թիվ 9, էջ 74:*

կրօնաւորական դասուք: Իսկ և իսկ եղև տեառն իմոյ Աշոտի ելանել 'ի մարմնոյ աստի՝ փոխելով առ հարսն իւր: Սահմանեցին որդեակքն մեր զգիւղս Արտասամուխ 'ի սուրբ ուխտս սահմանօքն իւրեանց (զոր) հարքն կերեալ էին, վասն երանելի իշխանին Աշոտի և ինձ Ծուշանայ՝ Սիւնեաց տիկնոջ, հոգեաց արձան և յիշատակ մեզ և յարևշատութիւն որդեկաց մերոյ: Եւ եղև զի հիմնաշարժ լինելով աւերեցան եկեղեցիքս. և իմ տեառն իմոյ Աշոտի կենաց հաղորդ կամելով լինել (առ 'ի) նորոգել զյիշատակ նորա փոխելոյն առ Քրիստոս՝ նոր շինեցի զսուրբ եկեղեցիս կրօնաւորաց շինուածովք յանուն սրբուհւոյ և միշտ կուսին Մարիամու Աստուածածնին. և վասն փրկութեան երանելի տեառն իմոյ Աշոտի՝ Սիւնեաց իշխանի և իմոյ մեղուցեալ ոգւոյ և որդւոյ մերոյ Սմբատայ և այլոցն երկարաձիգ կենաց և յաջողման իբրև զնոյն գիւղն Արտասամուխ ամենայն սահմանօքն նորա զոր կերեալ էին մինչև ցայսօր ժամանակի, 'ի ձեռս վանացս առաջնորդիս հաստատեցի անխախուտ պայմանաւ 'ի սուրբ Աստուածածինս՝ ի վանս Խոտակերաց մինչև յաւիտեանս ժամանակաց՝ կամակցութեամբ որդեկաց իմոյ:- Եւ զայս պայման հաստատեցի՝ ի սուրբ կրօնաւորանոցի աստ 'ի հինգ եկեղեցիսդ այդ, զոր ես շինեցի՝ – մին եկեղեցիդ որ է Աստուածածինդ՝ տեառն իմոյ Աշոտի և յիմանուն լիցի, 'ի տարին երեք քառասունք կատարեն մեղուցեալ հոգւոյ մերոյ, թերևս գտցուք ողորմութիւն յահեղ ատենին Քրիստոսի. այլ ևս չորս եկեղեցիքդ լիցին որդեկաց մերոյ յարևշատութիւն և հոգեացն փրկութիւն և 'ի պէտս վանացս: Արդ մի ոք իշխեսցէ այսմ անսուտ վճռիս և պայմանիս ընդդիմակաց լինել և խափանող. ապա թէ ոչ՝ այնպիսին Յուդայի մատնչին մասնակից լիցի և մեղաց մերոյ համարս տացէ յաւուր ահեղ ատենին Քրիստոսի:- Եւ մեք տէր Յովհաննէս՝ Հայոց կաթողիկոս, մերովք եպիսկոպոսօք և կղերիկոսօք, և տէր Յովհաննէս՝ Սիւնեաց եպիսկոպոս, վկայ եմք այսմ գրոյ և վճռի: Գրեցաւ յիշատակ կտակիս այս յ359 թուականիս Հայոց 'ի կամս ամենակալին Աստուծոյ, որ է օհնեալ յաւիտեանս ամէն»:[1]

Փաստորեն, կտակ-հիշատակագրությունը գրվել է հայոց երեք հարյուր հիսունինը (910) թվականին: Սյունյաց տիկին Ծուշանի նվիրատվական և շինարարական այս գործունեությունը հաստատող վիմագիր արձանագրությունը պահպանվել է Քարկոփի վանքի ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատի վերին մասում, արտաքուստ, 13 տող: Արձանագրությունը տեղավորված է պատի ամբողջ երկարությամբ, երեք շարք քարերի վրա: Կենտրոնական մասում բոլոր շարքերից քարեր են թափված, իսկ ծայրերից մասամբ[2]: Ի դեպ, չնայած այս արձանագրությունը Ստ. Օրբելյանը մեջ է բերում ազատ շարադրման ձևով, բայց ստույգ բովանդակությամբ:

Ինչ վերաբերում է Խոտակերաց կամ Քարկոփի վանքի տեղադրությանը, ապա ըստ Հայաստանի և հարակից շրջանների

---

[1] *Օրբելյան, էջ 173-174:*

[2] *Դիվան հայ վիմագրության, պրակ III, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 206-207:*

տեղանունների բառարանի[1] վանքը գտնվում է Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Վայոց Ձոր գավառում: Ավերակները գտնվում են Եղեգնաձորի Խաչիկ գյուղից 2-3 կմ հյուսիս-արևմուտք, Քարկոփ ավերակ գյուղից Ամաղու տանող ճանապարհի ձախ կողմում, սարավանդի վրա, գյուղի ավերակների մեջ:

Հայտնի է, որ 1254-1272թթ. իշխան Սմբատ Օրբելյանը նորոգել է վանքը: Հետագա դարերին երկար ժամանակ վանքն անմարդաբնակ է եղել, ինչի պատճառով էլ խիստ քայքայվել է: Վանքի տաճարը կոչվում էր Ս. Նշան: Վանքին կից եղել են 35 սենյակներ: Վանքի շրջան ջուր էին բերում ոչ հեռու գտնվող Ճոշռան աղբյուրներից: Վանքի բոլոր շինությունները կառուցված են եղել կոփածո, ոչ հղկված գորշ որձաքարից, ինչի պատճառով էլ վանքը վերաշինվելուց հետո անվանվել է Քարակոփ վանք[2]: Նոր ժամանակներում պահպանված են ս. Աստվածածին եկեղեցու միայն պատերը: Սա եղել է գմբեթավոր դահլիճ, որի 4 անկյուններում կային մեկական խորաններ: Արևմտյան կողմում գտնվում էին գավթի և փոքր մատուռի հիմնապատերը:

1300-ին իշխան Էաչի Պռոշյանը Խոտակերաց Սուրբ Նշանի համար պատրաստել է տվել արծաթե բարձրարվեստ և նրբաճաշակ դրվագումով պահարան: Երեսին, վերևում, քանդակված են քառակերպներով շրջապատված, գահին նստած Քրիստոսը և նրա երկու կողմերում՝ հրեշտակներ: Դռնակների վրա, աջից պատկերված է Գրիգոր Լուսավորիչը, ձախից՝ Հովհաննես Մկրտիչը, իսկ կողքերին՝ Աստվածածինը և Հովհաննես ավետարանիչը: Ներսում քանդակված են՝ ձախից՝ Պողոս և աջից՝ Պետրոս առաքյալները, կենտրոնում՝ Էաչի Պռոշյանի կիսանդրին: Դռնակների ներսերեսին պատկերված են՝ աջից՝ Գաբրիել, ձախից՝ Միքայել հրեշտակապետները: Թանկարժեք քարերով զարդարված խաչի ոսկեզօծ դաշտը ծածկված է արմավենիների նրբագեղ քանդակներով: Խոտակերաց Սուրբ Նշանի պահարանը հայկական միջնադարյան կիրառական արվեստի գլուխգործոցներից է (այժմ գտնվում է Էջմիածնում)[3]:

Իշխանուհի Ճուշանի նվիրատվական գործունեությունից հայտնի է նաև այն, որ նա Տաթևի վանքին է նվիրել Ծացարդն ու Քարատնիսը:[4] Ծածարդը գտնվում էր Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Ծղուկ գավառում: Ըստ հին հարկացուցակի (13-րդ դար) գյուղը վանքին տալիս էր 10 միավոր (դրամ) հարկ: Այժմ նրա ավերակների վայրը տեղացիները կոչում են Ծածառթ[5]: Իսկ Քարատնիքը գտնվում էր Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Բաղք գավառում[6]:

Անիի սուրբ Գրիգոր (Գրիգոր Պահլավունու) եկեղեցու մուտքի բարավորի վրա պահպանվել են Գրիգոր Պահլավունու տիկնոջ՝ Ճուշանի թողած երկու արձանագրությունները, որոնք տեղեկացնում են Ճուշանի նվիրատվությունների մասին: Սակայն Գնել Գրիգորյանը տեղեկացնում է,

---

[1] *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Հ-2, Երևան,1988, էջ 787*
[2] *Նույն տեղում:*
[3] *Քրիստոնյա Հայաստան, Հանրագիտարան, Երևան, 2002, էջ 438:*
[4] *Օրբելյան, էջ 167:*
[5] *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Հ-2, էջ 829-830:*
[6] *Նույն տեղում, էջ 321:*

որ պատմագիտության մեջ կարծիք կա, որ առաջին արձանագրության հեղինակը Շուշան Պահլավունին է, իսկ երկրորդ արձանագրության հեղինակը՝ «Սյունյաց տիկնանց տիկին Շուշանը», որը հիշատակում է Շուշանի կողմից Մրվանի կուղպակների նվիրատվության մասին:[1]

Այսպիսով, այս հոդվածում նպատակ ունենինք վերհանել սյունյաց նշանավոր իշխանուհի Շուշանի նվիրատվական և շինարարական գործունեությունը, մասնավորապես Քարկոփի կամ Խոտակերաց վանքի 5 եկեղեցիների կառուցումը, Ծացարդի և Քարատնիսի՝ Տաթևի վանքին նվիրելը:

Благотворительная и строительная деятельность княгини Сюника Шушан
Г.Шабунц

Резюме

Жена князя Ашота княгиня Шушан выделялась своей благотворительной и строительной (созидательной) деятельностью. Из ее строительной деятельности известно строительство 5 церквей монастыря Каркопа или Хотакерац в 910 году, а из благотворительной деятельности известно, что она подарила Татевскому монастырю Дзацард и Каратнис. В историографии есть упоминание о даре Шушаник Мрванских ларьков.

Charitable and Construction Activity of Shoushan the Princess of Syunik
G. Shabunts

Summary

The princess Shoushan, Prince Ashot's wife was famous for her charitable and constructional activity. From her constructional activity it is notable to mention the construction of the five churches of Qarkop or Khotakerats Monastery in 910.

She also donated Tsatsard and Qaratnis to Tatev Monastery. There is another record about Shoushan's donation of koughpaks /the old name of stalls/ of Mirvan.

[1] *Գրիգորյան Գր., Նվիրատվություններ Անիի եկեղեցիներին ու վանքերին (X-XIV դդ.), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2002, էջ 15:*